

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

DTaP (դիֆթերիայի, կապույտ հազի և փայտացման դեմ) պատվաստանյութ. Ի՞նչ է ձեզ անհրաժեշտ իմանալ

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis

Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են հայերենով և այլ լեզուներով: Տես www.immunize.org/vis կայքը

1. Ինչո՞ւ պատվաստվել:

DTaP պատվաստանյութը կարող է կանխարգելել դիֆթերիան, փայտացումը և կապույտ հազը:

Դիֆթերիան և կապույտ հազը փոխանցվում են մաշկի մարդու: Փայտացումը հարուցող բակտերիաները թափանցում են մարմնի մեջ կտրվածքների կամ վերքերի միջոցով:

- **ԴԻՖԹԵՐԻԱՆ (DIPHTHERIA, D)** կարող է հանգեցնել դժվար շնչոդության, սրտի նոպայի, կաթվածահարության կամ մահվան:
- **ՓԱՅՏԱՑՈՒՄԸ (TETANUS, T)** առաջացնում է մկանների ցավոտ քարացում: Փայտացումը կարող է հանգեցնել սրտի լուրջ խնդիրների, այդ թվում՝ ի վիճակի չլինել բացել բերանը, դժվարանալ կուլ տալ և շնչել կամ մահվան:
- **ԿԱՊՈՒՅՏ ՀԱՉԸ (PERTUSSIS, aP)**, որը նաև հայտնի է որպես «պերտուսիս» կարող է առաջացնել անվերահսկելի, դաժան հազ, որը դժվարացնում է շնչելը, ուտելը կամ խմելը: Կապույտ հազը կարող է չափազանց լուրջ լինել հատկապես նորածինների և փոքր երեխաների մոտ՝ առաջացնելով թոքաբորբ, ցնցումներ, ուղեղի վնաս կամ մահ: Դեռահասների և մեծահասակների մոտ այն կարող է առաջացնել քաշի կորուստ, միզապարկի վերահսկողության կորուստ, գիտակցության կորուստ և կողոսկրների կոտրվածքներ՝ ծանր հազի պատճառով:

2. DTaP պատվաստանյութ

DTaP-ն նախատեսված է միայն 7 տարեկանից փոքր երեխաների համար: Փայտացման, դիֆթերիայի և կապույտ հազի դեմ (Tdap և Td) տարբեր պատվաստանյութեր առկա են ավելի մեծ երեխաների, դեռահասների և մեծահասակների համար:

Խորհուրդ է տրվում, որ երեխաները ստանան DTaP-ի 5 դեղաչափ սովորաբար հետևյալ տարիքում՝

- 2 ամսեկան
- 4 ամսեկան
- 6 ամսեկան
- 15-18 ամսեկան
- 4-6 տարեկան

DTaP-ն կարող է տրվել որպես ինքնուրույն պատվաստանյութ կամ որպես համակցված պատվաստանյութի մաս (պատվաստանյութի տեսակ, որը միասին միավորում է մեկից ավելի պատվաստանյութեր մեկում):

DTaP-ն կարելի է ապահով կերպով տալ այլ պատվաստանյութերի հետ միաժամանակ:

3. Խոսք ձեր առողջապահական մատակարարի հետ

Ասեք ձեր պատվաստումներով զբաղվող մատակարարին, եթե պատվաստանյութ ստացող անձը.

- Ալերգիկ ռեակցիա է ունեցել որևէ պատվաստանյութի նախորդ դեղաչափից, որը պաշտպանում է փայտացումից, դիֆթերիայից կամ կապույտ հազից, կամ ունի որևէ լուրջ, կյանքին սպառնացող ալերգիաներ
- Կոմայի մեջ է ընկել, գիտակցության նվազեցված մակարդակ է ունենցել, կամ երկարատև նոպաներ կապույտ հազի պատվաստանյութի նախորդ դեղաչափից հետո 7 օրվա ընթացքում (DTP կամ DTaP)
- Ունի ցնցումներ կամ նյարդային համակարգի այլ խնդիր
- Երբևէ ունեցել է Գիեն-Բարրեի համախտանիշ (նաև կոչվում է Guillain-Barré Syndrome, GBS)
- Ունեցել է սուր ցավ կամ այտուցվածություն որևէ պատվաստանյութի նախորդ դեղաչափից հետո, որը պաշտպանում է փայտացումը կամ դիֆթերիան

Որոշ դեպքերում ձեր երեխայի առողջական խնամքի մատակարարը կարող է որոշել հետաձգել DTaP պատվաստումը մինչև հետագա այցը:



U.S. Department of Health and Human Services
Centers for Disease Control and Prevention

Թեթև հիվանդություններ, օրինակ՝ մրսածություն ունեցող երեխաները կարող են պատվաստվել: Երեխաները, ովքեր չափավոր կամ ծանր հիվանդ են, պետք է սովորաբար սպասեն մինչև ապաքինվելը՝ նախքան DTap պատվաստանյութ ստանալը:

Ձեր երեխայի առողջապահական խնամքի մատակարարը կարող է ձեզ հավելյալ տեղեկություններ տալ:

4. Պատվաստանյութից առաջացող ռեակցիաների ռիսկերը

- DTap պատվաստումից հետո երբեմն առաջանում է ցավ կամ այտուցվածություն պատվաստման հատվածում, ջերմություն, հոգնածության զգացում, ախորժակի կորուստ և փսխում:
- Ավելի լուրջ ռեակցիաներ, ինչպիսիք են նոպաները, 3 ժամ կամ ավելի չդադարող լացը կամ բարձր ջերմությունը (ավելի քան 40,5°C [105°F]) DTap պատվաստումից հետո տեղի են ունենում շատ ավելի հազվադեպ: Հազվադեպ, պատվաստմանը հաջորդում է ամբողջ ձեռքի կամ ոտքի այտուցը, հատկապես մեծ երեխաների մոտ, երբ նրանք ստանում են չորրորդ կամ հինգերորդ դեղաչափը:

Ինչպես և ցանկացած դեղամիջոցի դեպքում, շատ փոքր հավանականություն կա, որ պատվաստանյութը լուրջ ալերգիկ ռեակցիայի, այլ լուրջ փասսվածքի կամ մահվան պատճառ հանդիսանա:

5. Ի՞նչ տեղի կունենա լուրջ խնդրի դեպքում:

Ալերգիկ ռեակցիան կարող է տեղի ունենալ, երբ պատվաստված անձը հեռանա կլինիկայից: Եթե լուրջ ալերգիկ ռեակցիայի նշաններ եք տեսնում (եղնջատենք, դեմքի և կոկորդի այտուցվածություն, շնչառության դժվարություն, արագ սրտխփոց, գլխապտույտ կամ թուլություն), զանգահարեք 9-1-1 և անձին տարեք մոտակա հիվանդանոց:

Ձեզ մտահոգող այլ նշանների դեպքում զանգահարեք ձեր առողջապահական խնամքի մատակարարին:

Անբարենպաստ ռեակցիաների մասին պետք է հայտնել Պատվաստանյութերի հետ կապված անբարենպաստ երևույթների հաշվետվությունների համակարգին (Vaccine Adverse Event Reporting System, VAERS): Սովորաբար այս հաշվետվությունը կներկայացնի ձեր առողջապահական խնամքի մատակարարը կամ կարող եք դա ինքներդ անել: Այցելեք VAERS-ի կայքէջ՝ www.vaers.hhs.gov, կամ զանգահարեք 1-800-822-7967: VAERS-ը միայն ռեակցիաների մասին հաղորդելու համար է, իսկ VAERS-ի անձնակազմի անդամները չեն տրամադրում բժշկական խորհրդատվություն:

6. Պատվաստանյութից ստացված փասսվածքի փոխհատուցման ազգային ծրագիր

Պատվաստանյութից ստացված փասսվածքի փոխհատուցման ազգային ծրագիրը (National Vaccine Injury Compensation Program, VICP) դաշնային ծրագիր է, որը կոչված է փոխհատուցելու որոշակի պատվաստանյութերից փասսվածք ստացած մարդկանց: Պատվաստման հետևանքով ենթադրյալ փասսվածքի կամ մահվան վերաբերյալ հայցերի ներկայացման ժամկետը կարող է լինել երկու տարի: Այցելեք VICP-ի կայքէջ www.hrsa.gov/vaccinecompensation, կամ զանգահարեք 1-800-338-2382՝ տեղեկանալու ծրագրի և հայցի ներկայացման մասին:

7. Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Հարցրեք ձեր առողջապահական խնամքի մատակարարին:
- Չանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահության դեպարտամենտ:
- Այցելեք Սննդամթերքի և դեղորայքի վարչության (Food and Drug Administration, FDA) կայքէջ պատվաստանյութի փաթեթի ներդիրների և լրացուցիչ տեղեկությունների համար՝ www.fda.gov/vaccines-blood-biologics/vaccines:
- Կապվեք Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (Centers for Disease Control and Prevention, CDC) հետ՝
 - Չանգահարեք 1-800-232-4636 (1-800-CDC-INFO) կամ
 - Այցելեք CDC-ի կայքէջ՝ www.cdc.gov/vaccines:

Armenian translation provided by Immunize.org

Vaccine Information Statement

DTaP (Diphtheria, Tetanus, Pertussis) Vaccine

42 U.S.C. § 300aa-26

8/6/2021

OFFICE
USE
ONLY

